

Մասնագիտության նկարագիրը	
Պաշտոնի /զբաղմունքի/ անվանումը	0713.03.4 «Էլեկտրակայանների և ցանցերի տեխնիկական սպասարկում» մասնագիտության 0713.03.02.4 «Սպասարկող՝ ենթակայանների» որակավորում:
I. Դերը	Ենթակայան սպասարկողը, որպես էներգամատակարարման կազմակերպության աշխատող սպառողներին էլեկտրաէներգիա մատակարարելու համար 10-6/0,4 կՎ լարման տրանսֆորմատորային ենթակայանում կատարում է ուժային տրանսֆորմատորի, բաշխիչ սարքավորման, ցածր լարման կողմից էլեկտրաէներգիայի մատակարարման սարքերի, առբերվող և արտուղվող հաղորդալարերի (հաղորդաթիթեղների, հաղորդաձողերի, կաբելների) զննան և սպասարկման, ինչպես նաև հայտնաբերված ոչ մեծ ծավալային ու կարճաժամկետ անսարքությունների վերանորոգման աշխատանքներ:
II. Խնդիրների բնագավառները	
<u>Խնդիրների բնագավառ 1. Էլեկտրանյութագիտություն և էլեկտրտեխնիկական նյութերի տարբերակման հմտություններ</u>	
Աշխատանքային գործընթացը	Ներկայացնում է էլեկտրատեխնիկական նյութերի տեսակները, պարզաբանում է դրանց մեխանիկական, էլեկտրական, ջերմային, ֆիզիկա-քիմիական հատկությունները, բնութագրում է դիէլեկտրիկ, կիսահաղորդիչ և էլեկտրահաղորդիչ նյութերը:
Կատարման չափանիշներ	Էլեկտրատեխնիկական նյութերի բնութագրերը, հատկությունները պարզաբանված են, դիէլեկտրիկ, կիսահաղորդիչ և էլեկտրահաղորդիչ նյութերը տարբերակված են:
<u>Խնդիրների բնագավառ 2. Էլեկտրատեխնիկայի հիմնական օրենքները և դրանց կիրառման հմտություններ</u>	
Աշխատանքային գործընթացը	Պարզաբանում է նյութի ատոմային կառուցվածքը, էլեկտրական դաշտի լարվածությունը, մագնիսական դաշտը,

	<p>էլեկտրամագնիսական ինդուկցիան, էլեկտրատեխնիկայի հիմնական հասկացությունները՝ հոսանքի ուժը, լարումը և էլ.շ.ու.-ն, դիմադրությունը, հզորությունը, ջերմային քանակը և օրենքները՝ Օհմի, Կրիստոֆի, Ջոուլ-Լենցի:</p>
Կատարման չափանիշներ	<p>Էլեկտրական դաշտի լարվածության, մագնիսական դաշտի գրաֆիկական սխեմաները պատկերված են, էլեկտրատեխնիկայի հիմնական հասկացությունները պարզաբանված են, էլեկտրատեխնիկայի հիմնական օրենքների կիրառմամբ պարամետրերը որոշված են:</p>
<p><u>Խնդիրների բնագավառ 3. Տեխնիկական գծագրություն և էլեկտրահավաքակցման փականագործական գործույթներ</u></p>	
Աշխատանքային գործընթացը	<p>Պատկերում է հիմնական երկրաչափական կառուցումները, երկրաչափական մարմինների և տիպային շինվածքամասերի պրոյեկցիաները, կարդում է տիպային գծագրերը, ներկայացնում է էլեկտրահավաքակցման և փականագործական գործույթները, գործիքները, հարմարանքները, հաղորդալարերի և հաղորդաթիթեղների միացման եղանակները, հաղորդալարերի գունային մակնիշավորումները:</p>
Կատարման չափանիշներ	<p>Բնօրինակից էսքիզները, աշխատանքային գծագրերը պատկերված են, տիպային գծագրերը մեկնաբանված են, հաղորդաթիթեղները կտրված, խարտոցված, գայլիկոնված և կորացված են, հաղորդալարերը միացված և մեկուսացված են, հաղորդաթիթեղները միացված են, էլեկտրահավաքակցումը ըստ գույների կատարված է:</p>
<p><u>Խնդիրների բնագավառ 4. Ենթակայանների պարզ սխեմաներ և էլեկտրական շղթաներ, էլեկտրական շղթաների հավաքման հմտություններ</u></p>	
Աշխատանքային գործընթացը	<p>Ներկայացնում է շղթայի տարրերը, պասսիվ և կատարյալ տարրերը, էլեկտրակայանների, տրանսֆորմատորային ենթակայանների կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը, կառուցվածքային տարրերը, տարրերի պայմանական</p>

	նշանակումները:
Կատարման չափանիշներ	Պատկերված և պարզաբանված են էլեկտրական շղթաները, ներկայացված են էլեկտրակայանների և տրանսֆորմատորային ենթակայանների կառուցվածքային պարզ սխեմաները, էլեկտրական շղթաները հավաքված են, անվտանգության պահանջները պահպանված են:
<u>Խնդիրների բնագավառ 5. Էլեկտրական չափիչ և հաշվառող սարքեր</u>	
Աշխատանքային գործընթացը	Պարզաբանում է չափման գործույթը, դասակարգում է էլեկտրաչափիչ սարքերը ըստ չափումների եղանակների, չափվող մեծության, հոսանքի տեսակների, ճշտության աստիճանի, աշխատանքի սկզբունքի, ներկայացնում է չափման մեթոդները, չափիչ սարքերի կառուցվածքը, բացատրում է չափիչ սարքերի աշխատանքի սկզբունքը, տրանսֆորմատորային ենթակայանների էլեկտրական սարքավորումների պայմանակարգերի (ոեժիմների) ստուգման գործույթները:
Կատարման չափանիշներ	Հոսանքի, լարման, դիմադրության և հզորության ֆիզիկական մեծությունների չափումները կատարված են և համեմատված են բանաձևային հաշվարկմամբ ստացված տվյալների հետ, չափիչ-ստուգիչ վահանակում տրված պարամետրի ստուգման սարքերը ընտրված են, պարամետրի մեծությունները որոշված են և գործարանային կամ սահմանված տեխնիկական պարամետրի հետ համեմատված են, ստուգումները կատարված են, անվտանգության պահանջները պահպանված են:
<u>Խնդիրների բնագավառ 6. Էլեկտրակայանների տեսակները, տրանսֆորմատորային ենթակայանների կառուցվածքն ու աշխատանքի սկզբունքը</u>	
Աշխատանքային գործընթացը	Ներկայացնում է ըստ էներգիայի աղբյուրի էլեկտրակայանների, ըստ դասակարգման տրանսֆորմատորային ենթակայանների տեսակները, կառուցվածքները և աշխատանքի սկզբունքները, 10-6/0,4

	<p>կՎ լարման տրանսֆորմատորային ենթակայաններում օգտագործվող սարքերի (ուժային տրանսֆորմատորներ, էլեկտրական շղթայի, տեղամասի և սարքերի անջատիչներ, ապահովիչներ, բաշխիչ սարքավորումներ և այլն) տեսակները, դերը, նշանակությունը, կառուցվածքային տարրերը:</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>Ըստ էներգիայի աղբյուրի էլեկտրակայանների, ըստ դասակարգման տրանսֆորմատորային ենթակայանների տեսակները, կառուցվածքները և աշխատանքի սկզբունքները, 10-6/0,4 կՎ լարման տրանսֆորմատորային ենթակայաններում օգտագործվող սարքերի (ուժային տրանսֆորմատորներ, էլեկտրական շղթայի, տեղամասի և սարքերի անջատիչներ, ապահովիչներ, բաշխիչ սարքավորումներ և այլն) տեսակները, դերը, նշանակությունը, կառուցվածքային տարրերը ներկայացված են, 10-6/0,4 կՎ լարման տրանսֆորմատորային ենթակայանի էլեկտրական սխեման պատկերված է:</p>
<p align="center"><u>Խնդիրների բնագավառ 7. 10-6/0,4 կՎ լարման տրանսֆորմատորային ենթակայանների ուժային տրանսֆորմատորների, բաշխիչ սարքավորման և ցածրավոլտ լարման կողմից էլեկտրական սարքերի գնում, սպասարկում և վերահսկում</u></p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p>	<p>Ներկայացնում է տրանսֆորմատորային ենթակայաններում գնման և տեխնիկական սպասարկման պահանջները, գնման, փորձարկման, վերահսկման, սպասարկման գործույթները, էլեկտրամատակարարման սարքերի, սարքավորումների և սարքավորվածքների հիմնական անսարքությունները:</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>10-6/0,4 կՎ լարման տրանսֆորմատորային ենթակայանների ուժային տրանսֆորմատորների, բաշխիչ սարքավորման և ցածրավոլտ լարման կողմից էլեկտրական սարքերի պայմանական գնումը, փորձարկումը, վերահսկումը, սպասարկումը կատարված են,</p>

	<p>անսարքությունները որոշված են, ոչ մեծ ծավալային և կարճաժամկետ անսարքությունները վերացված են:</p>
<p>III. Պատասխանատվությունը /անմիջական պատասխանատվության շրջանակ/</p>	<p>10-6/0,4 կՎ լարման տրանսֆորմատորային ենթակայանների սպասարկողը պատասխանատվություն է կրում՝</p> <ul style="list-style-type: none"> - ուժային տրանսֆորմատորների և բաշխիչ սարքավորվածքի էլեկտրամատակարարման սարքավորումների ըստ լարման, բեռնվածության, ջերմաստիճանի և այլ պարամետրերի սահմանված պայմանակարգի (ռեժիմի) ապահովման աշխատանքներ իրականացնելու, համաձայն անվտանգության պահանջների - սպասարկվող էլեկտրամատակարարման սարքավորումների վթարային իրավիճակներում, վերանորոգման կամ պլանային ստուգման համար՝ համապատասխան հրահանգի էլեկտրական շղթաների գործարարական (օպերատիվ) փոխարկելումներ իրականացնելու, համաձայն անվտանգության պահանջների, - տրանսֆորմատորային ենթակայանների սպասարկվող էլեկտրամատակարարման սարքավորումների ընթացիկ, պլանային զննման, տեխնիկական սպասարկման գործույթներ իրականացնելու, համաձայն անվտանգության պահանջների, - էլեկտրատեխնիկական նութերը ըստ հատկությունների տարբերակելու և ոչ մեծ ծավալային ու կարճաժամկետ վերանորոգման աշխատանքներ իրականացնելու:
<p>IV. Լեզուները</p>	<p>Հայերեն՝ գերազանց Օտար լեզու՝ բավարար</p>
<p>V. Համակարգիչը</p>	<p>MS Word՝ լավ Internet Explorer՝ բավարար</p>
<p>VI. Գիտելիքները</p>	<p>Էլեկտրատեխնիկական նյութերի, դրանց հատկությունների, էլեկտրական սխեմաների և շղթաների, էլեկտրատեխնիկայի հիմնական հասկացությունների և օրենքների, էլեկտրատեխնիկայի անվտանգության</p>

	<p>կանոնների, էլեկտրահավաքակցման և փականագործական գործույթների, տրանսֆորմատորային ենթակայանի սարքավորումների զննման և տեխնիկական սպասարկման գործույթների իմացություն:</p>
<p>VII. Կարողությունները և հմտությունները</p>	<p>էլեկտրատեխնիկական նյութերի տարբերակում, էլեկտրական սխեմաների և շղթաների ընթերցում, էլեկտրական շղթայի հավաքում, ոչ մեծ ծավալային ու կարճաժամկետ վերանորոգման աշխատանքների իրականացում, 10-6/0,4 կՎ լարման տրանսֆորմատորային ենթակայանի ուժային տրանսֆորմատորի, բաշխիչ սարքավորման և ցածրավոլտ լարման կողմից էլեկտրական սարքերի տեխնիկական սպասարկում, անվտանգության կանոնների պահպանում:</p>
<p>VIII. Անձի որակական հատկանիշներ</p>	<p>Հաղորդակցվող, թիմային աշխատանքի պատրաստ, նորին ձգտող, ստեղծագործական մտածելակերպ ունեցող, ընկերասեր, հումորի զգացում ունեցող, համբերատար, պարտաճանաչ, ազնիվ:</p>

